ԱՆՁԻ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉ

ՀՏԴ 342.7
DOI: 10.56246/18294480-2025.18-34

ԱՄԻՐՅԱՆ ԱՆԻ
ԳՊՀ դասախոս
էլփոստ՝ amiryanani@inbox.ru

Հոդվածում քննարկվում է արժանապատվությունը՝ որպես մարդու սահմանադրական կարգավիճակի հիմնական տարր: Անձի արժանապատվության ճանաչումն ու հարգումը ժողովրդավարական պետության կարևոր խնդիրն է: Հոդվածում հիմնավորվում է, որ արժանապատվությունը սերտորեն կապված է մարդու իրավունքների, ազատության և օրենքի առջև հավասարության հետ՝ անկախ անձի սոցիալական դիրքից կամ այլ հատկանիշներից: Իսկ արժանապատվության ոտնահարման դեպքերն արձանագրվում են թե՛ իրական կյանքում, թե՛ համացանցային տիրույթում:

Պատմական, համեմատաիրավական վերլուծության մեթոդներով ուսումնասիրվում են արժանապատվություն հասկացությունը և դրա ժամանակակից ընկալումները տարբեր իրավական համակարգերում: Նշվում է, որ մարդու արժանապատվության հաստատումն ու ապահովումը ենթադրում են էթիկական, բարոյական, մշակութային, սոցիալական, իրավական եւ այլ նորմերի ու իրավական հարաբերությունների համակցություն, որտեղ արտահայտվում է որոշակի հարգանք անձի նկատմամբ: Անձի արժանապատվությունն իր մի շարք բաղադրիչներով մշտապես իրացվում է, հանդես գալիս որպես անձի գոյության և զարգացման անբաժանելի մաս, իսկ պետության և հասարակության խնդիրն է ապահովել այդ իրավունքի իրականացման երաշխիքները:

Հայաստանի Հանրապետությունում անձի արժանապատվության իրավունքի ոտնահարման վերաբերյալ գործերի աճող քանակը, վերջին ժամանակներս հասարակության հետաքրքրվածությունը հիշյալ իրավունքի եւ դրա պահպանության երաշխիքների ու կառուցակարգերի նկատմամբ, վկայում են ուսումնասիրության առարկայի արդիականության մասին: Հոդվածում ներկայացվում են օրենսդրական փոփոխությունների առաջարկներ՝ ուղղված մարդու արժանապատվության պաշտպանության իրավական

կառուցակարգերի կատարելագործմանը և դրանց արդյունավետության բարձրացմանը:

Բանալի բառեր՝ *Սահմանադրություն, մարդու սահմանադրական կարգավիճակ, արժանապատվության իրավունք, բարձրագույն արժեք, պատիվ, ազատություն:*

Դեռևս դարեր առաջ տարբեր կրոնափիլիսոփայական ուսմունքներում ձևավորվել են մարդու արժանապատվության կարևորության մասին գաղափարներ: Աստիճանաբար զարգանալով՝ արժանապատվության վերաբերյալ պատկերացումներն իրենց հատուկ տեղը զբաղեցրին մարդու մասին փիլիսոփայական ուսմունքներում: Մարդկային արժանապատվությունը տարբեր հոգևոր-մշակութային համակարգերում կարևորվում էր որպես մարդուն ներհատուկ հատկանիշ:

Մ. Մ. Ռոզենտալի խմբագրությամբ փիլիսոփայական բառարանում զուգահեռներ են անցկացվում արժանապատվության և խղճի միջև[1]: Է. Բ. Աղայանի բացատրական բառարանում արժանապատվությունը մեկնաբանվում է որպես իր անձի նկատմամբ ունեցած հարգանք, իր իրավունքների, իր արժանիքների գիտակցություն[2]: Հատկանշական է այն հանգամանքը, որ որոշ լեզուներում «պատիվ» և «խիղճ» հասկացությունները հոմանիշներ են, այսինքն՝ արժանապատվությունը, պատիվը և խիղճը օրգանապես շաղկապված են:

Արժանապատվության էության վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա մոտեցումների ուսումնասիրությունը թույլ է տալիս դրանք բաժանել երկու հիմնական ուղղությունների: Առաջինը բնաիրավական մոտեցումն է, որի պարագայում մարդու արժանապատվությունը ընդունվում է որպես բնությունից տրված արժեք, որն ամփոփված է բնական իրավունքի քրիստոնեական ուսմունքում և Էմանուել Կանտի փիլիսոփայության մեջ: Երկրորդ մոտեցման կողմնակիցներն արժանապատվությունը դիտարկում են մարդու անհատականության հետ միասին:

Այսպիսով, տարբեր ուսմունքներում ու հայեցակարգերում արժանապատվության գնահատման չափանիշները տարբեր են:

---

[1] Ռոզենտալ Մ. Մ., Փիլիսոփայական բառարան, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1975, էջ 40:

[2] Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 132:

Արժանապատվությունը մարդկային հատկանիշ է, որը հավասարազոր է հարգվելու իրավունքի և ուրիշներին հարգելու պարտականության[1]:

Համաձայն Էմանուել Կանտի ուսմունքի՝ «միայն մարդկությունն ու բարոյականությունը կարող են ունենալ արժանապատվություն, որը անվերջանալի բարձր է ցանկացած արժեքից եւ բացարձակապես չի կարող համեմատվել որեւէ այլ արժեքի հետ, որպեսզի հանկարծ չոտնահարվի դրա սրբազանությունը: Ցանկացած բանական էակի արժանապատվության հիմքում ընկած է ինքնավարությունը, իսկ մարդու կողմից արժանապատվությանը տրվող միակ գնահատականը հարգանքն է»[2]: Մտքերի այս հաջորդականությունը տպավորիչ դրսևորվում է Կանտի կատեգորիկ հրամայականի երկրորդ ձևակերպմամբ (որը հայտնի է որպես «ինքն իր նպատակի» բանաձև). «Վարվի՛ր այնպես, որ մարդուն վերաբերվես որպես նպատակի և երբեք՝ որպես միջոցի»: Հետևելով այս ելակետային դրույթին՝ Կանտի փիլիսոփայությամբ արժանապատվությունը, որպես կանոն, սովորաբար մեկնաբանվում է որպես «գործիքայնացման» արգելք, այսինքն՝ մարդկանց օգտագործումը որպես նպատակին հասնելու միջոցի արգելք: Մարդը չպետք է ծառայի որպես գործիք՝ այլ մարդկանց նպատակների իրագործման համար: Մարդկային արժանապատվության էության մասին կանտյան փիլիսոփայության ընկալումը՝ մարդուն միշտ վերաբերվել որպես նպատակի և ոչ երբեք որպես միջոցի կամ օբյեկտի, իր խոր ազդեցությունն է թողել մարդկային արժանապատվության՝ իրավական հայեցակարգի վրա:

Հատկանշական է լուսավորության դարաշրջանի ֆրանսիացի փիլիսոփա Ժան Ժակ Ռուսոյի կարծիքը, համաձայն որի՝ «հրաժարվել սեփական ազատությունից՝ նշանակում է հրաժարվել մարդկային արժանապատվությունից, մարդկային բնության իրավունքներից և նույնիսկ պարտականություններից»[3]:

Յուրաքանչյուր դարաշրջանում հասարակությունը յուրովի է լուծել մարդու արժանապատվության հավերժական խնդիրները, նորովի վերաիմաստավորել ճշմարտությունները, որոնք նախորդների կողմից բացարձակ էին համարվում: Գերմանացի հետազոտողների աշխատություններում նշվում է, որ Պլատոնը տարբերել է արժանապատվության հետեւյալ տարատեսակները՝ «ի ծնե բնական արժանապատվություն, դաստիարակության արդյունքում ձևավորվող

---

[1] Այվազյան Ն. Ա., ՀՀ սահմանադրական իրավունք, Գիրք 1-ին, Երևան: ԵՊՀ հրատարակչություն, 2016, էջ 248:

[2] Տե՛ս Кант И., Основы метафизики нравственности //modernlib.net/books/kant_i/osnovi_metafiziki_nravstvennosti/read/

[3] Տե՛ս Жан Жак Руссо. Об Общественном договоре, или Принципы политического Права//lib.ru/FILOSOF/RUSSO/prawo.txt_with-big-pictures.

արժանապատվություն, կրթության միջոցով ձեռք բերվող արժանապատվություն»[1]:

Հնագույն հունական մշակույթում արժանապատվությունը ներառվում էր բարոյականության, իմաստության, ողջամտության, առաքինության մեջ, որն իր հերթին արտահայտում էր մարդու բոլոր դրական որակները:

Արիստոտելը, արժանապատվությունը և պատիվը դիտարկելով որպես մեծագույն արտաքին բարիք, նշում էր, որ «Մեծ մարդիկ ամենից շատ են իրենց համար պահանջում պատիվ և փառք, որոնք համապատասխանում են նրանց արժանապատվությանը»՝ արձանագրելով որոշակի փոխկապվածություն արժանապատվության և գույքային կարգավիճակի միջև: Ըստ նրա՝ արժանապատվությունը ճանաչվում է որպես տոհմիկ մարդկանց, կառավարիչներին և աստվածներին բնորոշ, քանի որ նրանք բարձր են մյուսներից իրենց առաքինությունների և գույքային դրության ուժով, ուստի դրանց շնորհիվ են նրանց հարգում, թեև, արդարացիորեն միայն լավ մարդն է արժանի հարգանքի, իսկ նա, ով միավորում է գույքային կարգավիճակը և լավ մարդկային որակները, նրան առավել շատ են հարգում[2]:

Այսպիսով, Արիստոտելի ըմբռնմամբ՝ արժանապատվությունը հանդիսանում է այնպիսի տարրերից ձևավորվող համալիր հասկացություն, ինչպիսիք են խելացի մտքերը, բարեխիղճ վարքը, ներքին դրական որակները, օրինապահությունը, առաքինությունը և չափավորությունը: Արիստոտելը հիմնավորել է, որ առաքինությունը կազմում են հոգուն սոցիալապես վերագրելի և հավանության արժանացած որակները, որոնք մարդուն չեն տրվում բնությունից, այլ դաստիարակվում են նպատակաուղղված գործընթացի արդյունքում: Այս ամենը պայմանավորված էր այն հանգամանքով, որ մտածողության արիստոտելյան համակարգում մարդկանց համար առավել կարևոր էր հասարակական, քան՝ պետական գնահատականը:

Ժան Ժակ Ռուսոն անձի արժանապատվության սկզբնաղբյուրը տեսնում էր ազատության մեջ, որը մարդկանց մեծամասնությունը կորցրել է անհավասարության և սեփականության առաջացման հետ միասին: Նա վստահ էր, որ ոչ մի ազատություն առանց օրենքների գոյություն ունենալ չի կարող[3]: Համամիտ ենք Ժ. Ժ. Ռուսոյի այն կարծիքին, որ արժանապատվությամբ օժտված մարդը ենթարկվում, սակայն չի ծառայում, նրան կառավարում են, սակայն նա տեր չունի, նա ենթարկվում է միայն օրենքներին և հենց դրա ուժով մարդկանց չի

---

[1] Տե՛ս Аристотель. Этика. Политика. Риторика. Поэтика. Категории, Литература, 1998, էջ 230-231:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս Руссо Ж.-Ж., Трактаты, 1969, էջ 451:

ենթարկվում, ուստի կարծում ենք, որ մարդու արժանապատվությունն անմիջականորեն բխում է նրա էությունից: Մարդկային արժանապատվությունը, ինչպես և կյանքը, ընդունված չէ կախման մեջ դնել անձի սոցիալական դիրքից, հանրային կարևորությունից, տարիքից, սեռից, համոզմունքներից և այլն: «Անձի արժանապատվություն» հասկացության ընկալման և մեկնաբանման, դրա վերաբերյալ տարբեր մոտեցումների համեմատական և պատմահրավական վերլուծությունը վկայում է, որ այդ հասկացության իրավական մեկնաբանությունը տարաբնույթ է ընկալվել՝ պայմանավորված պատմական տարբեր ժամանակաշրջանում հասարակության զարգացման այս կամ այն մակարդակով:

Անձի արժանապատվության հասկացությունն անցել է փիլիսոփայական իմաստավորման հազարամյա պատմության միջով և տարբեր փիլիսոփայական ուսմունքներում և հոգևոր-մշակութային համակարգերում տարբեր կերպ է մեկնաբանվել: Անձի արժանապատվությունը բարդ և միաժամանակ բազմակողմ հասկացություն է, որը հնարավոր է բացահայտել տարբեր ասպեկտներով: Օրինակ՝ կենսաբանական ասպեկտի էությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր մարդ՝ որպես կենդանի էակ, ի ծնե ունի որոշակի արժեք և որպես արժեք ունեցող՝ ընկալվում է ոչ միայն շրջապատի, այլև հենց իր կողմից:

Մարդն իրեն շրջապատող աշխարհը, կատարվող իրադարձությունները, երևույթները ընկալում է իր ներսում ձևավորված բարոյական և աշխարհայացքային չափանիշների հիման վրա, որն էլ արժանապատվության անհատական անձնային կողմն է:

«Արժանապատվություն» հասկացությունն ունի նաև սոցիալական կողմ, որը պայմանավորված է հասարակության մեջ անձի դիրքով և այդ դիրքի ընկալումով, հասարակության հետ նրա հարաբերություններով և սոցիալական դերով:

Կարծում ենք, որ անձի արժանապատվությունը կարելի է բնորոշել որպես մարդուն ներհատուկ հատկանիշ, մարդկային մշակույթի բնականոն և սոցիալապես պայմանավորված արժեքային համակարգ և միաժամանակ, մարդու իրավունքների և ազատությունների հիմք, որն արտահայտվում է արժեքային գնահատականներով, հոգեբանական զգացումներով և պայմանավորված է անձի ինքնագնահատմամբ, սեփական անձի հանդեպ այլ անձանց վերաբերմունքի բարոյահոգեբանական ընկալմամբ:

«Անձի արժանապատվություն» հասկացությունն ի սկզբանե ընկալվել է որպես բարոյագիտական կատեգորիա[1]:

---

[1] Նշված հասկացությունն իր արտացոլումն է գտել փիլիսոփաներ Արիստոտելի, Պլատոնի, Կանտի, Ժան-Ժակ Ռուսոյի, հայ մտածողներ Մովսես Խորենացու, Մխիթար Գոշի, Շահամիր Շահամիրյանի, Մովսես Բաղրամյանի եւ այլոց աշխատություններում:

Ժամանակակից սահմանադրական դոկտրինում մարդու արժանապատվությունն իրենից ներկայացնում է բացարձակ պաշտպանության ենթակա սահմանադրական բարձրագույն արժեք: Արժանապատվությունն առանց բացառության տարածվում է կյանքի բոլոր ոլորտների վրա:

Մ. Նովիցկին նշում է, որ արժանապատվությունը բնորոշ է ինչպես նորածնին, ով դեռ ոչինչ չի հասցրել անել, այնպես էլ հանցագործին[1]:

Հարավաֆրիկյան Հանրապետության Սահմանադրական դատարանը 2006 թվականի օգոստոսի 3-ի իր որոշմամբ նշել է, որ «Անձի արժանապատվության, ինչպես նաև հեղինակության պաշտպանության անհրաժեշտությունն անքակտելիորեն կապված է դիմացինի նկատմամբ հարգանքի գաղափարի և սկզբունքի հետ»[2]:

Այսպիսով, մարդու արժանապատվությունը նշանակում է, որ բոլոր մարդիկ, անկախ իրենց ծագումից կամ այլ հատկանիշներից, ինչպիսիք են սեռը, տարիքը կամ գույքային դրությունը, ունեն միևնույն արժեքը և միևնույն հիմնական իրավունքները:

Մարդու արժանապատվության հաստատումն ու ապահովումը ենթադրում են էթիկական, բարոյական, մշակութային, սոցիալական, իրավական և այլ նորմերի ու իրավական հարաբերությունների համակցություն, որտեղ արտահայտվում է որոշակի հարգանք անձի նկատմամբ: Անձի արժանապատվությունն իր մի շարք բաղադրիչներով մշտապես իրացվում է, հանդես գալիս որպես անձի գոյության և զարգացման անբաժանելի մաս, իսկ պետության և հասարակության խնդիրն է ապահովել այդ իրավունքի իրականացման երաշխիքները: Անձի արժանապատվության իրավունքի իրացման ապահովումն ու պաշտպանությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրական պոզիտիվ պարտականությունն է: Մարդու արժանապատվության իրավունքի իրականացման հիմնական միջոցն է այդ իրավունքի ճանաչումը, ապահովումը, պահպանությունն ու պաշտպանությունը երաշխավորող համապատասխան իրավական նորմերի ամրագրումը, սակայն միայն ամրագրումը բավարար չէ նշված իրավունքը լիարժեք իրացնելու համար: Այս առումով կարևոր է հասարակության իրավագիտակցության բարձր մակարդակ ապահովելը, որը կարող է դրսևորվել տարբեր ձևերով:

Մարդու արժանապատվության ոտնահարման՝ դատական պրակտիկայում եւ մասնագիտական գրականության մեջ նշվող օրինակները բազմազան են: Մարդու արժանապատվության երաշխավորումը նշանակում է պաշտպանություն

---

[1] Տե՛ս en.wikipedia.org/wiki//Marek_Antoni_Nowicki:

[2] Տե՛ս Հարավաֆրիկյան Սահմանադրական դատարանի 2006 թվականի մարտի 23-ի որոշումը, //www.safill.org/:

այնպիսի խախտումներից, ինչպիսիք են խոշտանգումը, հետապնդումը, խտրականությունը, նվաստացումը, անարգելը և հալածելը, տվյալները ապօրինի հավաքելն ու օգտագործելը, մարդու արժանապատվությունը ոտնահարելը՝ տեղեկությունների ձեռքբերման ու փոխանցման, ինչպես նաեւ տարաբնույթ միջոցներով մարդու անձնական կյանքի մեջ ներխուժելու միջոցով: Նշանակում է, որ մարդու արժանապատվության նշանակությունն ու կարևորությունը կարելի է որոշել վերջին հաշվով միայն առանձին գործի հանգամանքների և կյանքի համապատասխան ոլորտի համար[1]:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դաշնային սահմանադրական դատարանը մարդու արժանապատվության հասկացությունը դիտարկել է որպես առանցքային սահմանադրական սկզբունք՝ հիմնական իրավունքների համակարգում:

Մարդու արժանապատվության արտահայտման, դրսևորման և պաշտպանության տարբեր ասպեկտների, ինչպես նաև մարդու արժանապատվության իրավունքի իրականացման, ընկալման և մեկնաբանման խնդրի, այդ իրավունքի պաշտպանության, այդ թվում՝ պատվի և արժանապատվության խախտման գործերի վերաբերյալ հետազոտությունների արդյունքների տրամաբանական վերլուծությունը հնարավորություն է տալիս անձի արժանապատվության հարգումը և պահպանումը բնորոշել որպես կոնկրետ անձի սեփական արժանապատվության պաշտպանության (պետության և հասարակության կողմից որպես սոցիալական նշանակություն ունեցող, պահպանվող և պաշտպանվող արժեք) և դրսևորման, արտահայտման, պաշտպանության և կյանքի կոչելու այլ մեխանիզմների իրական հնարավորությունների տիրապետում, այդ թվում՝ այլ անձանց հետ հարաբերություններում, դրա հետ կապված իրավունքների ամբողջություն, ինչպես նաև առօրյա՝ ընթացիկ, անմիջական և իրավիճակային ձևերով:

Ժամանակակից պետությունն ունի սահմանադրական պարտականություն իր գործողություններում (իրավաստեղծ, իրավակիրառ, իրավապահ, արդարադատության իրականացման ոլորտում) ցույց տալու, որ մարդու արժանապատվության հարգումը սոցիալական, իրավական պետության կայացման հիմնական ցուցիչն է: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ հանրային իշխանության մարմինները պարտավոր են ցանկացած պարագայում չոտնահարել մարդու արժանապատվությունը և օրենսդրական մակարդակում ստեղծել մեխանիզմներ՝ անձի արժանապատվությունը այլ մարդկանց ոտնձգություններից պաշտպանելու համար:

---

[1] Տե՛ս Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դաշնային սահմանադրական դատարանի որոշում, //hy.wikipedia.org/wiki/ Գերմանիայի դատական համակարգ:

Վավերացնելով Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը՝ Հայաստանի Հանրապետությունը ճանաչել է դրա նախաբանի այն հիմնարար դրույթը, համաձայն որի՝ «Մարդու իրավունքները բխում են մարդկային անհատներին հատուկ արժանապատվությունից»[1]:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ՝ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ անփոփոխելի հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն արժեքը մարդն է: Մարդու անօտարելի արժանապատվությունը նրա իրավունքների եւ ազատությունների անքակտելի հիմքն է (3-րդ հոդվածի 1-ին մասին)[2]: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները վերտառությամբ 2-րդ գլխի 23-րդ հոդվածն ամրագրում է, որ արժանապատվությունն անխախտելի է:

Ինչպես նշված է ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ 649 որոշման մեջ՝ մարդուն՝ որպես արժանապատվության եզակի կրողի բարձրագույն արժեք ճանաչելը վերացական չէ և ունի որոշակի իրավական բովանդակություն: «Բարձրագույն արժեք» նշանակում է, որ որևէ այլ արժեք, այդ թվում՝ պետական, և հանրային խնդիրների լուծմանը կոչված որեւէ համակարգ, չի կարող ավելի բարձր դասվել: Այստեղից էլ տրամաբանորեն բխում է սահմանադրական այն լուծումը, որ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք[3]:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասի ուժով մարդուն և նրան ներհատուկ արժանապատվությունը ճանաչելով բարձրագույն արժեք, ապա, նույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով որոշակիացնելով մարդ և հանրային իշխանության հարաբերությունների սահմանը՝ առաջնային պլան է մղվում արժանապատվություն կրող մարդու անհատական շահը: Այս իմաստով արժանապատվությունը ձեռք է բերում սահմանադրական օբյեկտիվ արժեքի նշանակություն և հանդես է գալիս որպես սահմանադրական իրավունքների իրացման ապահովման և այդ իրավունքներով սահմանափակված հանրային իշխանության գործունեության չափանիշ: Անհատի արժանապատվության հարգումն ու երաշխավորումը սահմանադրական կարգի հիմնարար

---

[1] Տե՛ս Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր//arlis.am:

[2] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, հոդված 3-րդ:

[3] Տե՛ս ՍԴՈ-649 որոշում, 04.10.2006, էջ 9-10:

սկզբունք և սահմանադրորեն կազմակերպված հասարակության բարոյական ու իրավական հիմքն է:

Ժամանակակից իրավաբանական գրականության մեջ արժանապատվության իրավունքը դիտարկվում է որպես սուբյեկտիվ իրավունք: Առանձին հեղինակներ, ընդգծելով արժանապատվության՝ որպես սուբյեկտիվ իրավունքի առանձնահատկությունները, նշում են, որ այն իրենից ներկայացնում է իր կատարածի և չկատարածի վերաբերյալ իր անձի նկատմամբ հասարակության բարոյական գնահատականի ձևավորման պահանջի իրավունք: Առանձին հեղինակներ, փորձելով հերքել վերը նշված դատողությունը, ընդամենը ընդգծում են, որ արժանապատվության իրավունքը պետք չէ հասկանալ որպես կատարածի վերաբերյալ հարգանքի պատվի իրավունք:

Կարծում ենք, որ արժանապատվությունը սահմանադրական սկզբունք ճանաչելը բավարար չէ պատասխանատու իշխանության ձևավորման համար: Այս իմաստով բոլոր հիմնական իրավունքներն ունեն իշխանության պատասխանատվությունը բարձրացնելու խնդիր, քանզի պետությունը Սահմանադրության ուժով կրում է պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն մարդու իրավունքների և ազատությունների իրացման, արժանապատվության իրավունքի ապահովման երաշխիքների համար[1]:

Հատկանշական է, որ արժանապատվության իրավունքը, իրավունքների և ազատությունների հիմքը լինելու տրամաբանությամբ, կարող է «տուժել», եթե խախտվում են այլ իրավունքներ: Այստեղ պետք է ուշադրության արժանանա «այլ իրավունքներ» հասկացությունը, որի օգտագործումը չի կարող պատահական լինել, քանզի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի մեկնաբանությունից հետևում է, որ արժանապատվությունը ոչ միայն հիմնական, այլև ընդհանրապես մարդու իրավունքների և ազատությունների հիմքն է: Այս իմաստով էլ մարդու արժանապատվությունն անվերապահորեն պետք է համարել մարդու սահմանադրական կարգավիճակի բաղադրիչը: Այդ մասին են վկայում նաև միջազգային իրավական ակտերը, որոնք արժանապատվությունը դիտարկում են որպես մարդու իրավունքների և ազատությունների ճանաչման ելակետային տարր:

Մի շարք երկրների սահմանադրությունների համեմատաիրավական վերլուծությունը վկայում է, որ գրեթե բոլոր երկրների սահմանադրություններում կամ հիմնարար նշանակություն ունեցող՝ մարդու իրավունքների հռչակագրերում առկա է հայեցակարգային հստակ մոտեցում մարդու իրավունքների հանդեպ, իսկ

---

[1] Պոզիտիվ սահմանադրական պատասխանատվության մասին մանրամասն տե՛ս Հակոբյան Ռ. Խ., Սահմանադրական պատասխանատվության հիմնախնդիրները, մենագրություն, Երևան, «Իրավունք», 2008, 516 էջ:

65-ից ավելի երկրների սահմանադրություններում որոշակիացված է նաև մոտեցումն անձի արժանապատվության սահմանադրական սկզբունքի նկատմամբ: Վերջինիս նվիրված է մեկ կամ ավելի հոդված, շեշտվում է անձի արժանապատվության անձեռնմխելիությունը՝ որպես անքակտելի իրավունք, անօտարելիությունը, հարգման և պաշտպանման՝ պետության պարտավորությունը, ինչպես նաև առնչությունները մարդու իրավունքներին ու ազատություններին[1]:

Միայն մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունը կարող է ապահովել իրավունքների և ազատությունների հավասարություն: Իսկ այդ իրավունքները և ազատությունները մարդուն ընձեռում են ինքնահիրացման հնարավորություն: Ամենալայն բնորոշմամբ՝ մարդու իրավունքները կոչված են պաշտպանելու մարդկային արժանապատվությունը:

Ըստ էության, մարդու արժանապատվությունը հանդես է գալիս որպես մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգի արժեքային հիմք, ընդ որում մարդու արժանապատվության իրավունքի նկատմամբ մարդու կյանքի իրավունքը հանդիսանում է անհրաժեշտ պայման և արժանապատվության իրավունքի իրացման երաշխիք: Իր նշանակությամբ կյանքի և առողջության պահպանման իրավունքից հետո կարևորվում է արժանապատվության իրավունքը, որը, ըստ էության, բոլոր այլ իրավունքների հիմքն է: Այս առումով արժանապատվության իրավունքը դառնում է սահմանադրական մյուս հիմնարար իրավունքների աղբյուր, մարդու իրավական կարգավիճակի առանցքային բաղադրիչ: Մարդու իրավունքներին վերաբերող միջազգային իրավական բազմաթիվ փաստաթղթերում մարդու իրավունքները թվարկելիս արժանապատվության իրավունքին, որպես կանոն, իրավացիորեն վերապահվում է առաջնային դերակատարություն: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում նշվում է, որ մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով[2]: Այս դրույթից բխում է այն հանգամանքը, որ արժանապատվությունն իր նշանակությամբ հավասարեցված է բոլոր մյուս իրավունքների ամբողջությանը:

Միավորված ազգերի կազմակերպության Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի նախաբանում նշվում է, որ մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և նրանց հավասար ու անկապտելի իրավունքների ճանաչումը ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքն է և այդ իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից: Համանման

---

[1] Տե՛ս www.concourt.am:

[2] Տե՛ս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, //www.arlis.am/

սկզբունք սահմանված է նաև ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրի նախաբանում[1]:

Ինչպես արդեն նշվել է, արժանապատվությունը՝ որպես բարձրագույն սոցիալական արժեք, մարդու անքակտելի իրավունքն է, որը պատկանում է անձին՝ անկախ նրանից, թե ինչպես է ինքն ընկալում և գնահատվում իր և իր շրջապատի կողմից: Այստեղից էլ մարդու սահմանադրական իրավունքների համակարգում անձի արժանապատվությունը հարգելու սկզբունքը համարվում է որպես պետության վերաբերմունքի չափանիշ անձի և նրա իրավական կարգավիճակի հանդեպ:

Եթե մինչեւ 2005 թվականը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը կառուցված էր մեթոդաբանական այն մոտեցման վրա, համաձայն որի՝ իրավակարգավորման հիմքում դրվում էր օրենքի գերակայության սկզբունքը, ապա 2005 թվականի սահմանադրական գործընթացների շրջանակում այդ կարգավորումների հիմքում առաջադրվեց հիմնական պահանջ մարդու բնական ու անօտարելի իրավունքների գերակայության, առաջնայնության, ելակետային բնույթի ճանաչման ու ամրագրման մասին, որը միանշանակ առավել ընդունելի է՝ իրավական պետության կայացման համատեքստում: 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրական փոփոխությունների արդյունքում դարձյալ կարևորվեց մարդը, ով իր իրավունքներով, ազատություններով և արժանապատվությամբ ճանաչվեց բարձրագույն արժեք:

Այսպիսով, հանրային հարաբերություններում առանցքային դերակատարությունը վերապահվում է մարդուն՝ իր անօտարելի արժանապատվությամբ և իրավունքներով: Ընդ որում այդ դեպքում արժանապատվության իրավունքը հանդիսանում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնական աղբյուրը, որի պաշտպանությունը համարվում է պետության գոյության հիմնական պայմանը[2]:

Մարդու արժանապատվության ճանաչումը՝ որպես համապարփակ եւ բացարձակ, պետության կողմից պաշտպանվող սահմանադրական արժեք, հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում անձի իրավական կարգավիճակի կարևորագույն բնութագրիչը: Մարդու առաջնայնության սկզբունքը դրված է Սահմանադրության ողջ բովանդակության հիմքում: Այդ սկզբունքի բովանդակությունից են բխում նաև պետության պարտականությունները մարդու

---

[1] Տե՛ս Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին դաշնագիր// //www.arlis.am/

[2] Տե՛ս Այվազյան Վ., Մարդու իրավունքներ, երկրորդ լրամշակված հրատարակություն,Երեւան, 2007, էջ 91:

և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ճանաչման, դրանց ապահովման, երաշխավորման, պահպանման ու պաշտպանության վերաբերյալ:

Մարդու սահմանադրական իրավունքների մեջ ամենակարևոր խումբն այն հիմնական իրավունքներն են, որոնք հայտնի են «դասական իրավունքներ» անվամբ: Դրանք այն իրավունքներն են, որոնք ամրագրում են մարդու ազատությունը եւ հավասարությունը, որոնք մարդուն ուղղակիորեն իրավունք են վերապահում հանրային իշխանությունից պահանջելու որոշակի վարքագիծ. նախ և առաջ՝ ձեռնպահ մնալու այդ իրավունքներին միջամտելուց, ինչպես նաև, որպես պետությանն ուղղված հավելյալ պահանջ, կատարելու պոզիտիվ գործողություններ իր իրավունքն իրականացնելու համար: «Դասական» հիմնական իրավունքները պետության հետ մարդու և քաղաքացու հարաբերություններում անմիջականորեն գործող իրավունքներն են, այլ կերպ ասած՝ դրանք կենսագործելի իրավունքներ են հանրային իշխանության նկատմամբ:[1]

«Դասական» հիմնական իրավունքների սահմանադրական ամրագրման արդյունքում այդ իրավունքները ստանում են ուղղակի գործողություն, իսկ խախտվելու դեպքում դառնում են անմիջականորեն դատական պաշտպանության ենթակա, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի կողմից: Ամենակարևորն այստեղ այն է, որ «դասական» հիմնական իրավունքները պետության համար պարտադիր են, և դրանց իրագործման ծավալը չի կարող տարբեր լինել կամ կախված լինել պետության հայեցողությունից: «Դասական» հիմնական իրավունքներից պետք է տարբերել սոցիալական քաղաքականության ոլորտում պետության նպատակները և պետության խնդիրները: Դրանք իրավաբանական առումով տարաբնույթ դրույթներ են, ունեն գործողության տարբեր ձևեր և առաջացնում են տարբեր իրավական հետևանքներ[2]:

Կարևորելով հասարակությունում և պետությունում ծավալվող սոցիալական հարաբերություններում անհատի արժանապատվության հարգման անհրաժեշտությունը՝ պետք է արձանագրել, որ մարդու արժանապատվությունը հանդիսանում է սկզբնական և անփոփոխ այն պայմանը, որը միաժամանակ օբյեկտիվորեն գոյություն ունեցող բարոյաիրավական երևույթի դրսևորում է ստանում՝ անկախ պետության կամ այլ սուբյեկտի կողմից նրա ճանաչման հանգամանքից: Այդ իմաստով արժանապատվությունը իմաստավորող մարդու իրավունքները հանդիսանում են անբաժանելի, անօտարելի իրավունքներ և

---

[1] Նույն տեղում:

[2] Պողոսյան Վ., Սարգսյան Ն., Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. Համառոտ պարզաբանումներ, Երեւան, 2016, էջ 39:

դրանք որևէ մեկի կողմից որևէ պայմանով կամ որևէ հիմքով չեն կարող սահմանափակվել:

Ինչպես 2005 թվականի խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, այնպես էլ 2015 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ գլուխը տրամաբանորեն սկսվում է մարդու արժանապատվության իրավունքի ամրագրմամբ, քանի որ այն մարդու իրավունքների և ազատությունների հիմքում ընկած, հիմնարար նշանակություն ունեցող անքակտելի իրավունք է: Մարդու իրավունքների և ազատությունների այլ հնարավոր սահմանափակումները չպետք է խաթարեն մարդու արժանապատվությունը: Մարդու արժանապատվությունը Հայաստանի Հանարապետության Սահմանադրությունը ճանաչում է նաև որպես սահմանադրական կարգի հիմունք: Միաժամանակ այն ճանաչվում է որպես մարդու սուբյեկտիվ իրավունք՝ 23-րդ հոդվածի ուժով[1]:

Այսինքն՝ արժանպատվությունը, հանդիսանալով մարդու սահմանադրական կարգավիճակի հիմնարար բաղադրիչ, միաժամանակ առաջնային և անհրաժեշտ է մարդու այլ հիմնական իրավունքների պահպանման և պաշտպանության համար:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, իրացնելով «մարդակենտրոն» Սահմանադրության գաղափարը, անփոփոխելի հոդվածների շարքին է դասել 3-րդ հոդվածը, որը սահմանադրական կարգավորումների առանցք է դիտարկում մարդուն՝ որպես բարձրագույն արժեք, և նրա անօտարելի արժանապատվությունը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածում իր արտահայտությունն է գտել այն կարևոր գաղափարը, որ պետության գոյությունն ինքնանպատակ չէ, պետությունը գոյություն ունի հանուն մարդու, նրան ծառայելու համար և ոչ թե հակառակը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ դրույթի համաձայն՝ մարդու արժանապատվությունն անօտարելի է: Դրանով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը ելնում է այն կանխադրույթից, որ արժանապատվությունը մարդուն ներհատուկ է հենց նրա գոյության փաստով: Մարդը հիմնական իրավունքների կրող է իր արժանապատվության ուժով: Արժանապատվությունը մարդու իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է, և որպեսզի հստակեցվի մարդու արժանապատվության եւ հիմնական իրավունքների միջեւ անխզելի կապը, նշենք, որ առանց մարդու արժանապատվության չկան հիմնական իրավունքներ, իսկ

[1] www.lawlibrary.info.ar, 23/01.2019:

առանց հիմնական իրավունքների չկա մարդու արժանապատվություն: Մարդու արժանապատվությունը բոլոր հիմնական իրավունքների եւ ազատությունների աղբյուրն է, դրանց հիմնարար բաղադրիչը, ուստի «հիմնական իրավունքները պետք է մեկնաբանվեն և կիրառվեն՝ ելնելով արժանապատվության սկզբունքից և այն իրականացնելու նպատակով[1]»:

Գտնում ենք, որ անձի արժանապատվության իրավունքը այն ելակետային հիմնարար դրույթն է, որով պետք է առաջնորդվի պետական և տեղական ինքնակառավարման համակարգում գործող յուրաքանչյուր մարմին և նշված իրավունքի պահպանումը պետք է դառնա այդ մարմինների կարևոր առաքելությունը:

Անձի արժանապատվության անմիջական պաշտպանության օրենս-դրական երաշխիքների իրացման հարցում հատկապես կարևորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի դերը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի կողմից ընդունված որոշումներում արտացոլված իրավական դիրքորոշումները սկզբունքային նշանակություն ունեն ՀՀ-ում անձի արժանապատվության անմիջական պաշտպանության միասնական հայեցակարգ մշակելու հարցում:

Այսպես, ՀՀ Սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է մարդու արժանապատվության պաշտպանության երաշխիք-ներին: Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-618 որոշմամբ արձանագրել է, որ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելումը բխում է ՀՀ Սահմանադրության նպատակներից[2]: Իսկ Սահմանադրական դատարանի մեկ այլ՝ ՍԴՈ-913 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ մի կողմից՝ մարդու արժանապատվության հարգման և պաշտպանության, մյուս կողմից՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նրա սահմանադրական իրավունքների ներդաշնակումը անհատի, նրա արժանապատվության, հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես բարձրագույն արժեքների, գերակա է հասարակական շահի նկատմամբ: Առանցքային որոշումներից է ՍԴՈ-1546 որոշումը (2020թ.), որտեղ դատարանը շեշտել է, որ արժանապատվությունը անօտարելի է, մարդու իրավունքների հիմքն է, ենթակա է անվերապահ պաշտպանության[3]: Նույն որոշմամբ արձանագրվել է նաև, որ մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի կարևորագույն բաղադրիչը նրա

---

[1] Պողոսյան Վ., Սարգսյան Ն., Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրություն, Համառոտ պարզաբանումներ, Երևան, 2016, էջ 26:

[2] Տե՛ս //www.concourt.am/ 14 փետրվարի 2006թ., ՍԴՈ-618:

[3] Տե՛ս //www.concourt.am/ 18 հունիսի 2020թ., ՍԴՈ- 1546:

արժանապատվությունն է, որն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ առաջնային նշանակություն ունի մարդու և քաղաքացու բոլոր հիմնական իրավունքների ու ազատությունների ազատ, անարգել ու երաշխավորված իրականացման համար, որը նաև ենթադրում է ինչպես սահմանադրորեն թույլատրելի շրջանակներում անձի կողմից որոշակի գործողությունների կատարում և կամահայտնության դրսևորում, այնպես էլ դրանք պաշտպանելու պետության համարժեք պարտականություն[1]: ՍԴՈ-1121 որոշմամբ անդրադարձ է կատարվել արժանապատվության և բժշկական օգնություն ստանալու իրավունքի փոխկապակցվածությանը[2]:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2011 թվականի ՍԴՈ-935 որոշմամբ փաստել է, որ գործնականում առաջին հերթին հանցագործության հետևանքով տուժած անձի իրավունքների ու արժանապատվության խախտում պետք է դիտարկվի այն, որ օրենսդրության մեջ բացակայում է նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում կայացված՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին վերջնական որոշումների վերանայման մեխանիզմը: Զարգացնելով այդ միտքը՝ Սահմանադրական դատարանը նաև արձանագրել է, որ եթե տուժողի համար արդարադատությունը մատչելի չէ, հետևաբար այն խախտում է դատարանի առջև հավասարության սկզբունքը եւ դրանով իսկ իմաստազրկում արդարադատության բուն գաղափարը[3]:

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1- րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցին՝ Սահմանադրական դատարանը արձանագրել է, որ զրպարտության ապաքրեականացման վերաբերյալ թե՛ Հայաստանի Հանրապետությունում, և թե՛ եվրոպական մի շարք երկրներում վերջին տարիներին կատարված օրենսդրական փոփոխությունների ու նոր իրավակարգավորման հիմնական տրամաբանությունը հենվում է ոչ թե մեղավորության կանխավարկածի վրա (նախատեսել պատիժ՝ արարքի համար), այլ անմեղության կանխավարկածի վրա (երաշխավորել անձի անմեղությունը՝ վերականգնելով նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը): Երբ անձի պատվի և արժանապատվության արատավորումը հետևանք է դիտավորության, չարամտորեն իրականացված գործողության, ունի շարունակական բնույթ ու առնչվում է լրատվամիջոցին, ապա խնդիրը տեղափոխվում է նաև իրավահարաբերությունների կարգավորման այլ հարթություն, և հարցը

---

[1] Տե՛ս //www.concourt.am/ 14 սեպտեմբերի 2010թ., ՍԴՈ-913:

[2] Տե՛ս //www.concourt.am/ 05 նոյեմբերի 2013թ., ՍԴՈ-1121

[3] Տե՛ս //www.concourt.am/ 4 փետրվարի 2011թ., ՍԴՈ-935:

կարող է քննության առարկա դառնալ ընդհուպ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման տեսանկյունից[1]:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածը հնարավորություն չի ընձեռում վիրավորանքի և զրպարտության դեպքում գերազանցել այդ հոդվածով սահմանված ոչ նյութական վնասի դրամական հատուցման չափը բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, որոնք առաջացրել են առավել ծանր հետեւանքներ անձի համար: Նշված հոդվածի մեկնաբանման վերաբերյալ արտահայտվել է հետեւյալ մոտեցումը.

«Բոլոր այն դեպքերում, երբ անձի իրավունքների խախտումը տեղի է ունենում այնպիսի ինտենսիվությամբ, որ նույնիսկ ուղղված լինելով նյութական արժեքների դեմ՝ իր ուժգնությամբ խախտում է նաև անձի արժանապատվությունը, օրինակ, պատճառում է վախ, նվաստացնում անձին, պետք է նաև հատուցում նախատեսվի այս դեպքում, խոսքը, մասնավորապես, վերաբերում է այն դեպքերին, երբ անձը դառնում է քրեական հանցագործության զոհ: Քրեական հանցագործության զոհ դարձած անձինք բոլոր դեպքերում իրավունք ունեն դիմելու և ստանալու իրենց պատճառված ոչ նյութական վնասի հատուցում առավելապես այն դեպքում, երբ անձը դարձել է այնպիսի հանցանքի զոհ, որն առաջին հերթին ուղղված է անձի հոգեկան և ֆիզիկական հավասարակշռության դեմ»[2]:

Կարծում ենք՝ նման մոտեցումը արդարացված է ոչ միայն անձի հոգեկան և ֆիզիկական հավասարակշռության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում, այլ բոլոր այն հանցանքների դեպքում, որոնց արդյունքում խախտվել է անձի արժանապատվության իրավունքը կամ որևէ կերպ ոտնահարվել այն: Մարդու արժանապատվությունը հանդես է գալիս պետության եւ հասարակության կողմից պահպանվող ու պաշտպանվող բարձրագույն սոցիալական արժեք միայն այն դեպքում, երբ մարդն ունի իրական հնարավորություն գործելու իր արժանապատվությանը համապատասխան և պաշտպանելու իր իրավունքները որպես հարգման ու պաշտպանության ենթակա տարր: Մարդու արժանապատվության ապահովումն այն անհրաժեշտ պայմանն է, որի պարագայում երաշխավորվում է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների արդյունավետ իրացումը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՀ սահմանադրական օրենքը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին է վերապահել «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ

---

[1] Տե՛ս //www.concourt.am/ 15 նոյեմբեր 2021թ., ՍԴՈ-997:

[2] Տե՛ս Առաքելյան Ն., Արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2015:

արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի՝ 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունած կամընտրական արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակը: Սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածը սահմանում է Պաշտպանի լիազորությունները կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակում, ամրագրում է հոգեբուժական կազմակերպություններ պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այցեր կատարելու՝ Մարդու իրավունքների պաշտպանի հնարավորությունը:

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների Պաշտպանի գործունեությունը, հետևելով տարեկան և արտահերթ զեկույցներին[1]՝ կարող ենք փաստել, որ Հայաստանի Հանրապետությունում մարդու արժանապատվության իրավունքի ապահովման և լիարժեք իրացման գործում կարևոր է Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը՝ իրեն տրված լիազորությունների լիարժեք և պատշաճ կատարման միջոցով:

Այսպիսով, թեև Հայաստանի Հանրապետությունում օրենսդրորեն նախատեսված են անձի արժանապատվության իրավունքի ապահովման համար անհրաժեշտ երաշխիքներ, սակայն հարկ է ստեղծել անհրաժեշտ մեխանիզմներ՝ դրանք գործնականում կիրառելու համար: Ուստի առաջարկում ենք ընդունել «Մարդու արժանապատվության անձեռնմխելիության մասին» առանձին օրենք, որը կամրագրի արժանապատվության հստակ սահմանումը և դրա բաղադրիչները, պետության պոզիտիվ պարտավորությունները արժանապատվության պաշտպանության ոլորտում, արժանապատվության խախտման դեպքերի դասակարգումը, իրավական պաշտպանության միջոցները, քրեական օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ խստացնելով արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի համար քրեական պատասխանատվությունը, սահմանել նոր հանցակազմեր՝ կապված արժանապատվության դեմ ուղղված հանցագործությունների հետ, վերանայել պատժաչափերը, Քաղաքացիական օրենսգրքում հստակեցնել բարոյական վնասի հատուցման մեխանիզմները, սահմանել արժանապատվության խախտման դեպքում փոխհատուցման հստակ չափերը, ամրագրել ապացուցման բեռի բաշխման առանձնահատկությունները, դատավարական օրենսգրքերում սահմանել արժանապատվության պաշտպանության գործերով արագացված դատաքննության կարգ, գործերի քննության

[1] Տե՛ս pashtpan.am/publications/annual_reports.html
//pashtpan.am/publications/special_reports.html:

ողջամիտ ժամկետներ, ինչու չէ նաև ներդնել արժանապատվության պաշտպանության հարցերով օմբուդսմենի ինստիտուտի:

Կարծում ենք՝ այս փոփոխությունները կնպաստեն արժանապատվության իրավունքի առավել արդյունավետ պաշտպանությանը, քանզի արժանապատվության պահպանումն առանցքային նշանակություն ունի կյանքի տարբեր ոլորտներում: Այսպիսով, արժանապատվության պաշտպանությունը պահանջում է ինչպես պետության և հասարակության, այնպես էլ յուրաքանչյուր անհատի ջանքերը՝ ստեղծելու արժանապատիվ կյանքի պայմաններ բոլորի համար: Սահմանադրական նորմերը պետք է ոչ միայն հռչակեն մարդու արժանապատվության սահմանադրական իրավունքը, այլև առավելագույնս հստակ սահմանեն դրա իրացման երաշխիքները, պետության պարտավորությունները, առանձին իրավունքների սահմանափակման հիմքերն ու կարգը, թույլատրելի շրջանակները: Մարդու իրավունքները պետք է դիտարկվեն որպես անձի արժանապատվության վրա հիմնված իրագործելի իրավական հնարավորություններ և ոչ թե պարզապես գեղեցիկ ձևակերպված դրույթներ, որոնք բխում են միջազգային պարտավորություններից: Միայն այս դեպքում կարող է խոսք լինել ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության մասին:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն, 2015թ. փոփոխություններով, Երևան, 2015:
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 05.05.1998:
3. ՀՀ քրեական օրենսգիրք, 05.05.2021:
4. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենք, 04.02.2017:
5. «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, 13.12.2003թ.:
6. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 10.12.1948:
7. Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 16.12.1966:
8. Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին դաշնագիր, 16.12.1966:
9. Այվազյան Ն. Ա., ՀՀ սահմանադրական իրավունք, Գիրք 1-ին, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016:
10. Այվազյան Վ., Արժանապատվությունը որպես մարդու իրավունքների հիմք, Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Երևան, 2012:
11. Այվազյան Վ., Մարդու իրավունքներ, երկրորդ լրամշակված հրատարակություն, Երևան, 2007:

12. Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան 1976:
13. Առաքելյան Ն., Արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2015:
14. Երիցյան Ա., Մարդու իրավունքների եւ դրանց պաշտպանության հիմնախնդիրները գլոբալիզացիայի դարաշրջանում, Երեւան, 2007:
15. Հակոբյան Ռ. Խ., Սահմանադրական պատասխանատվության հիմնախնդիրները, մենագրություն, Երևան, «Իրավունք», 2008, 516 էջ:
16. Մուրադյան Գ., ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան, 2010:
17. Պողոսյան Վ., Մարդու իրավունքներ, հասկացություններ, սկզբունքներ, մոտեցումներ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2002:
18. Պողոսյան Վ., Սարգսյան Ն. ՀՀ 2015 թվականի Սահմանադրությունը, համառոտ մեկնաբանություններ, Երևան, 2016:
19. Հարավաֆրիկյան Սահմանադրական դատարանի 2006 թվականի մարտի 23-ի որոշում //www.safill.org/:
20. Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դաշնային սահմանադրական դատարանի որոշում, //hy.wikipedia.org/wiki/:
21. Ռոզենտալ Մ. Մ., Փիլիսոփայական բառարան, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1975:
22. Аристотель, Этика. Политика. Риторика. Поэтика. Категории, Литература, 1998.
23. Жан Жак Руссо,. Об Общественном договоре, или принципы политического права//lib.ru/FILOSOF/RUSSO/prawo.txt_with-big-pictures.
24. Кант И., Основы метафизики нравственности //modernlib.net/books/kant_i/osnovi_metafiziki_nravstvennosti/read/
25. Руссо Ж.-Ж. Трактаты, 1969:

Համացանցային կայքեր

1. www.arlis.am/
2. www.advocates.am/
3. www.datalex.am/
4. www.gov.am/am/
5. www.pashtpan.am
6. www.concourt.am/
7. www.wikipedia.org/

8. www.coe.int/hy/web/yerevan/european-court-of-human-rights
9. www.parliament.am/

HUMAN DIGNITY AS A KEY COMPONENT OF A PERSON'S CONSTITUTIONAL STATUS

AMIRYAN ANI
GSU lecturer
e-mail: amiryanani@inbox.ru

The article explores the concept of dignity as a fundamental element of the constitutional status of a person. Recognition and respect for human dignity are key components of a democratic state. The article substantiates that dignity is closely related to human rights, freedom and equality before the law, regardless of a person's social status or other characteristics. Violations of dignity are observed both in everyday life and in the online domain. The evolving concept of dignity and its modern interpretations across different legal systems are examined using historical, comparative-legal analysis methods. It is noted that the establishment and protection of human dignity implies a combination of ethical, moral, cultural, social, legal and other norms and legal relationships, where certain respect for the individual is expressed. A person's dignity, with its various components, is constantly being realized and manifests as an inseparable part of a person's existence and development, while it is the task of the state and society to ensure the guarantees for the implementation of this right.

The increasing number of cases related to the violations of the right to dignity in the Republic of Armenia, along with the recent growing interest of society in the aforementioned right, as well as the guarantees and mechanisms for its protection, testify to the relevance of the topic. The article presents proposals for legislative amendments aimed at improving the legal mechanisms for the protection of human dignity and enhancing their effectiveness.

Keywords: *Constitution, constitutional status of a person, right to dignity, honor, supreme value, freedom.*

ЧЕЛОВЕЧЕСКОЕ ДОСТОИНСТВО КАК КЛЮЧЕВОЙ КОМПОНЕНТ КОНСТИТУЦИОННОГО СТАТУСА ЧЕЛОВЕКА

АМИРЯН АНИ
Преподаватель ГГУ
электронная почта: amiryanani@inbox.ru

В статье рассматривается неотчуждаемое достоинство как основной элемент конституционного статуса человека и неотъемлемая основа его прав и свобод. Признание и уважение человеческого достоинства является важной задачей демократического государства. В работе обосновывается тесная связь достоинства с правами человека, свободой и его равенством перед законом, вне зависимости от социального положения или иных характеристик. Случаи нарушения достоинства фиксируются как в реальной жизни, так и в цифровом пространстве.

Посредством исторического и сравнительно-правового анализа исследуется понятие достоинства и его современные интерпретации в различных правовых системах. Отмечается, что утверждение и обеспечение человеческого достоинства предполагает сочетание этических, моральных, культурных, социальных, правовых и иных норм и правовых отношений, где выражается определенное уважение к личности. Достоинство личности с его различными составляющими постоянно реализуется и выступает как неотъемлемая часть существования и развития личности, а задача государства и общества - обеспечить гарантии реализации этого права.

Рост числа дел, связанных с нарушением права на достоинство личности в Республике Армения, а также возрастающий общественный интерес к данному праву, механизмам его защиты и гарантиям сохранности свидетельствуют об актуальности предмета исследования.

В статье представлены предложения по внесению законодательных изменений, направленных на совершенствование правовых механизмов защиты человеческого достоинства и повышение их эффективности.

Ключевые слова: *Конституция, конституционный статус человека, право на достоинство, честь, высшая ценность, свобода.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 20.02.2025թ.:
Հոդվածը գրախոսվել է 06.03.2025թ.:
Ընդունվել է տպագրության 25.04.2025թ.: